ԱՆՀՐԱԺԵՇՏ, ՈՒՍԱՆԵԼԻ, ՕԳՏԱԿԱՐ ՈՒ ՀԵՏԱՔՐՔԻՐ

Արտակարգ դեպք

à í Çñ³½»Ï í³Í ¿, Ý³ å³ßïå³Ýí³Í ¿

URL:http://www.emergency.am, E-mail: tert@emergency.am

№ 33 (210)

14.9.07-20.9.07

Շաբաթաթերթ

Ամերիկան հիշում է

Վեցամյա փոշու զոհերը

Ամերիկան վեցերորդ անգամ հիշեց այն օրը, որը տարանջատեց երկրի կյանքը՝ սեպտեմբերի 11-ից «առաջ» և «հետո»: Այս տարի էլ, ինչպես վեց տարի առաջ, օրը երեքշաբթի էր, ու շատերը դա չարագուշակ կանխանշան համարեցին, հատկապես, որ դրան նախորդել էր շուրջ երեք տարվա լռությունից հետո անսպասելիորեն հայտնված Ուսամա բեն Լադենի նոր ուղերձը: Բայց այդ օրը վախն ու անվստահությունն իրենց տեղը զիջել էին վշտին:

Ահաբեկության զոհերի հիշատակին նվիրված միջոցառումների հիմնական մասն անցկացվեց Նյու Յորքում, որտեղ զոհերի թիվն ավելի մեծ էր: Արարողության պաշտոնական սկիզբը տեղի ժամանակով առավոտյան 8.40-ին էր: Համաշխարհային առեւտրի կենտրոնի հյուսիսային աշտարակին առաջին ինքնաթիռը բախվել էր ժամը 8.46-ին: Այդ պահին ամբողջ Միացյալ Նահանգները սուզվեց լռության որպեի մեջ. լսվում էին միայն եկեղեցիների զանգերը:

Արարողության ժամանակ, ահաբեկության օրն աղետից տուժածներին առաջինն օգնություն ցուցաբերած հրշեջները, ոստիկաններն ու քաղաքացիները, կարդում էին ահաբեկության 2750 զոհերի անունները: Անցյալ տարի նրանց թիվը 2749-ն էր: Այս տարի այն ավելացավ եւս մեկով: Ֆելիսիա Դան Ջոնսը մահացել էր ողբերգությունից հինգ ամիս անց: Նրա մահվան պատճառն աղետի ժամանակ թոքերում ներծծված փոշին էր, որը հանգեցրել էր վտանգավոր հիվանդության:

Շատերի կարծիքով Ֆելիսիայի անունը զոհերի ցուցակում ավելացնելն ահաբեկության առաջին ժամերին եւ օրերին իշխանությունների թույլ տված սխալների ընդունում կարող էր նշանակել: Այդ ողբերգական օրերին Միացյալ Նահանգների իշխանությունները բազմիցս հայտարարել էին, որ օդի մեջ վտանգավոր նյութերի խտությունը չի գերազանցում սահմանված քանակությունը: Այդ պատճառով աղետից ահաբեկված եւ տուժածներին օգնել փորձող ամերիկացիների մեծ մասն անտեսել էր Մանհեթենի օդում տարրալուծված մահաբեր փոշու առկայությունը: Դրա հետեւանքով ծանր հիվանդություններ ստացած մարդիկ երկար ժամանակ փորձում էին թոքերը բուժելու համար ծախսած գումարների դիմաց կառավարությունից փոխհատուցում ստանալ, սակայն այս մասին օրինագիծը միայն օրերս կմտնի Կոնգրես:

…Ի հիշատակ ահաբեկության զոհերի և ի երախտագիտություն նրանց, ովքեր անձնվիրաբար կրկին կյանք ներարկեցին քաղաքին, 2007 թ. սեպտեմբերի 11-ի երեկոյան, մայրամուտից հետո, Մանհեթենի վրա, մեկ օրով, նորից հայտնվեցին աշտարակների ուրվապատկերները: Հզոր լուսարձակները լույսի երկու հսկա սյուն նետեցին նյույորքյան մութ երկնքի նույն այն տեղում, ուր մի ժամանակ հպարտ կանգնած էին աշտարակները:

Անհետ կորածի հետքերով



Աշտարակ

ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅՈՒՆԻՑ

Օգոստոսի 24-ին Վայոց ձորի մարզի փրկարարական վարչության դիսպետչերական կետում ահազանգ ստացվեց ոստիկանության Եղեգնաձորի բաժնի պետից. Արենի գյուղի գերեզմանոցի տարածքին հարակից անանցանելի հատվածում՝ ժայռերի արանքում, 12-15 մետր խորության վրա դիակ կա, եւ դուրս բերելու համար անհրաժեշտ է փրկարարների օգնությունը:

Տեղ ժամանած փրկարարները՝ իրենց վարչության պետով, տեղակալով, ամբողջ կազմով, իրավապահ մարմիններով, տարակուսած նայում էին ընդամենը կես մետր իրարից հեռու ժայռի ծերպերին, որոնց արանքից անդնդախոր ընդերքում նշմարվում էին մարդու ուրվագծեր:

ß³ñáõÝ³ ÏáõÃÛáõÝÁ 4-ñ¹ ¿çáõÙ

«էլիտ գրուպն» առաջարկում է կյանքի նոր որակ

Սեյսմակայուն էլիտար շինարարության առաջատարը տարածաշրջանում

E-mail: info@elitegroup.am; URL: www.elitegroup.am

Դուք ցանկանում եք լավագույնը, շքեղն ու հարմարավետը, ապահովն ու անվտանգը, նախընտրում եք ճարտարապետական ինքնատիպ լուծումները, գերժամանակակից ինժեներատեխնիկական հագեցվածությունը, զարգացած ենթակառուցվածքը, բարձրակարգ սպասարկումը, ամենահարգին ու հեղինակավորը:

Այլեւս մի փնտրեք Ձեր ուզածն արտասահմաններում, այն, ինչ երազել եք, այսօր արդեն իրականություն է. «էլիտ Գրուպը» Երեւանի կենտրոնում կառուցում է Ձեր երազանքը: Միակ ընկերությունը Հայաստանում, որն արժանացել է որակի կառավարման ISO 9001-2000 միջազգային ստանդարտի վկայագրի՝ թոփ մենեջմենթի բնագավառում:

Ապահով, սեյսմակայուն եւ էլիտար շենքեր հատուկ Ձեզ համար:

Երեւան, Պուշկինի 21, ✆ 56-69-22, 56-69-33:

Քրոնիկոն էջ 2, 3

Միջազգային էջ 2

Եղանակի կանխատեսում՝ հետադարձ հայացքով էջ 4

Մոլորությունների հանրագիտարան էջ 5

Ինչպես են արարել հանճարները էջ 5-6

Ինչպես պահպանել երեխայի տեսողությունը էջ 7

Բարի լույս եւ բարի ախորժակ էջ 7

Արտակարգ ժամանց էջ 8

Գինը 100 դրամ

ԱՆՑԱԾ ՇԱԲԱԹ
.. ՔՐՈՆԻԿՈՆ ..

Նույն օրը տարբեր վայրերում

Սեպտեմբերի 9-ին, ժամը 12.35-ի սահմաններում, Արմավիրի մարզի Նորակերտ գյուղի մոտակայքով հոսող Ստորին Հրազդան ջրանցքն է ընկել եւ խեղդվել 16-ամյա Գուրգեն Գրիգորյանը:

Դեպքի վայր է մեկնել Արմավիրի մարզի փրկարարական ջոկատը, սակայն մարզի Շահումյան գյուղի մոտակայքում Գ. Գրիգորյանի դիակը ջրանցքից դուրս են բերել տեղի բնակիչները:

Նույն օրը, 25 որպե տարբերությամբ, 12-ամյա Բարունակ Պետրոսյանն Արագածոտնի մարզի Լեռնապար գյուղի մերձակայքում գտնվող լճակում ձուկ բռնելու ժամանակ ընկել է ջուրը եւ խեղդվել:

Տղայի դիակը լճակից դուրս են բերել տեղի բնակիչները:

Ավտոպատահարներ

Սեպտեմբերի 6-ին Երեւանի Աճառյան փողոցում՝ «Ֆորդ» ավտոսրահին հարակից տարածքում «ՎԱԶ» մակնիշի մի ավտոմեքենա բախվել է էլեկտրական սյանը:

Պատահարի հետեւանքով տարբեր աստիճանների մարմնական վնասվածքներով Երեւանի «Սբ. Գրիգոր Լուսավորիչ» բժշկական կենտրոն են տեղափոխվել 1952 թ. ծնված Գայանե եւ 1985 թ. ծնված Արշակ Սարգսյանները, 1953 թ. ծնված Սամվել Բալասանյանը եւ 1962 թ. ծնված Կարինե Մկրտչյանը:

***

Սեպտեմբերի 9-ին ահազանգ է ստացվել, որ Երեւան-Դիլիջան ավտոճանապարհի 85-րդ կմ-ին «ՎԱԶ-2121» մակնիշի 10 ՍՏ 712 պետհամարանիշով ավտոմեքենան ընկել է ձորը, եւ վարորդին դուրս բերելու համար անհրաժեշտ է փրկարարների օգնությունը:

Դեպքի վայր մեկնած հրշեջ-փրկարարների օգնությամբ ավտոմեքենայից դուրս է բերվել Տավուշի մարզի Այգեձոր գյուղի բնակիչ՝ 1932 թ. ծնված Սերյոժա Ապերյանը:

Տուժածը տեղափոխվել է Դիլիջանի հիվանդանոց:

Ըստ բժիշկների՝ տուժածի վիճակը բավարար է:

Ջորից դուրս է բերվել նաեւ ավտոմեքենան:

***

Սեպտեմբերի 11-ին ահազանգ է ստացվել, որ Արարատի մարզի Լանջառ գյուղի մոտակայքում մի ավտոբուս շրջվել է ձորը: Դեպքի վայր է մեկնել Արարատի մարզային փրկարարական ջոկատը: Մինչ փրկարարների ժամանումը, վթարից տուժածներին օգնության են հասել Լանջառ գյուղի բնակիչները:

Պարզվել է, որ գյուղին հարակից ձորակն է շրջվել «ՊԱԶ» մակնիշի 16 LS 138 պետհամարանիշով ավտոբուսը, որը տեղափոխում էր Մարտունու «Ալաշկերտ» մանկապատանեկան ֆուտբոլային թիմը՝ 19 մարդ:

Վթարի հետեւանքով տարբեր աստիճանների մարմնական վնասվածքներ է ստացել 13 մարդ, որոնք տեղափոխվել են Արարատի հիվանդանոց:

Նախնական զննումից պարզվել է, որ տուժածներից երկուսը գանգուղեղային վնասվածքներով գտնվում են ծանր վիճակում: Երեւանի «Արաբկիր» բժշկական կենտրոն է տեղափոխվել Արթուր Գրիգորյանը, իսկ «Էրեբունի» բժշկական կենտրոն՝ Ջորակ Սարիբեկյանը, Վալերի Լեւոնյանը եւ Տարոն Սարմանյանը, ինչպես նաեւ պատանիներին ուղեկցող 1966 թ. ծնված Մյասնիկ եւ Հարություն Ասրյանները:

Մյուս 7 տուժածները, ստանալով առաջին բուժօգնություն, դուրս են գրվել Արարատի հիվանդանոցից:

Դեղորայքային թունավորում

Սեպտեմբերի 9-ին դեղորայքային թունավորումով Գյումրիի «Ավստրիական» մանկական հիվանդանոց է տեղափոխվել Շահումյան փողոցի 4ա շենքի բնակիչ՝ 3-ամյա Էմանուել Խաչատրյանը:

Ըստ բժիշկների՝ երեխայի առողջական վիճակը բավարար է:

Օձը խայթեց

Սեպտեմբերի 9-ին օձի խայթոցով Վանաձորի թիվ 1 հիվանդանոց է տեղափոխվել Լոռու մարզի Ազնվաձոր գյուղի բնակիչ՝ 1988 թ. ծնված Արթուր Վարդանյանը:

Ըստ բժիշկների՝ տուժածի վիճակը բավարար է:

Ուժեղ քամի

Սեպտեմբերի 11-ին, ժամը 14.20-ի սահմաններում Վարդենիսում ուժեղ քամին պոկել եւ քշել է բնակիչներից մեկի խոհանոցի 18 քմ մակերսով տանիքը, որն էլ հարվածելով «Արեւիկ» մսուր-մանկապարտեզի շենքին՝ կոտրել է 4 պատուհան:

Զոհեր եւ վիրավորներ չկան:

Ինքնափլուզում Վանաձորում

Սեպտեմբերի 11-ին ահազանգ է ստացվել, որ ժամը 21.40-ի սահմաններում ինքնափլուզվել են Վանաձորի Գրիբոյեդովի փողոցի 6 հասցեում գտնվող 9 հարկանի շենքի 1-ին շքամուտքի աստիճանավանդակները: Դեպքի վայր է մեկնել Լոռու մարզային փրկարարական ջոկատը:

Պարզվել է, որ շքամուտքը բնակեցված չէ, եւ ինքնափլուզվել են 9-6-րդ հարկերի աստիճանավանդակները:

Զոհեր եւ վիրավորներ չկան:

Հրդեհներ

Անցած երկու շաբաթվա ընթացքում հանրապետության տարածքում արձանագրվել է հրդեհների բռնկման 86 դեպք:

Խոտատարածքները շարունակվում են այրվել

Թեեւ արդեն աշուն է, սակայն հանրապետությունում առկա չոր եւ շոգ եղանակային պայմանները շարունակում են նպաստել խոտածածկ տարածքների բռնկմանը: Վերջին մի քանի օրվա ընթացքում գրանցվել է նման հրդեհի 28 դեպք, որոնցից 15-ը առավել խոշոր ծավալի:

Սեպտեմբերի 6-ին Տավուշի մարզում, Բերդին հարակից հանդամասում այրվել է 4 հա խոտ, իսկ Արագածոտնի մարզի Աղձք գյուղում՝ 3,5 հա խաղողի այգի:

Սեպտեմբերի 7-ին Վայոց ձորի մարզի Վերնաշեն գյուղում այրվել է 10 հա խոտատարածք:

Սեպտեմբերի 8-ին Արարատի մարզի Սուրենավան գյուղին հարակից լեռներում

այրվել են 10 հա խոտածածկույթ եւ ծառեր:

Սեպտեմբերի 9-ին Վայք-Արին ավտոճանապարհի 4-րդ կմ-ին հարակից տարածքում այրվել է 7 հա չոր խոտ:

Սեպտեմբերի 10-ին Կոտայքի մարզի Քասախ գյուղում այրվել են 4,5 հա խոտ եւ 5000 քմ մակերեսով այգի:

ՀԱՅԱՍՏԱՆԻ NEWS
.. ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԼՈՒՐԵՐ ..

Փլվել է կառուցվող ավտոմայրուղին

Հնդկաստանի Հայդարաբադ քաղաքում փլվել է կառուցվող ավտոմայրուղին: Պատահարի հետեւանքով զոհվել է առնվազն 20 հոգի, եւս մի քանի տասնյակ մարդիկ ստացել են տարբեր աստիճանների վնասվածքներ:

Միջադեպը տեղի է ունեցել կիրակի երեկոյան, երբ շինհրապարակին հարակից ճանապարհները լեփ-լեցուն էին ավտոմեքենաներով: Փրկարարները եւ շտապօգնության մեքենաները երկար ժամանակ չէին կարողանում մոտենալ դեպքի վայրին: Ըստ ոստիկանության հաղորդած տվյալների՝ փլատակներում մնացել է մոտ 25 ավտոմեքենա:

Ավտոպատահար. առնվազն 85 զոհ

Սեպտեմբերի 8-ին խոշոր ավտոպատահար է տեղի ունեցել Հնդկաստանի Ռաջասթան նահանգում: Երկու հարյուր ուխտագնացի տեղափոխող բեռնատար ավտոմեքենան, դեռեւս չպարզված հանգամանքներում, դուրս է եկել լեռնային ճանապարհից եւ 24 մետր բարձրությունից գլորվել կիրճը: Զոհվել է առնվազն 85 մարդ: Տարբեր աստիճանների վնասվածքներով հիվանդանոց է տեղափոխվել 64 ուղեւոր:

Ինչպես հայտնել են ոստիկանության ներկայացուցիչները՝ վթարված տրանսպորտային միջոցը նախատեսված չէր մարդկանց տեղափոխման համար: Նման վթարներ Հնդկաստանում հաճախ են պատահում, քանի որ ուխտագնացները խստապահանջ չեն տրանսպորտի ընտրության հարցում: Բացի այդ, ավտոպատահարների թվի աճին նպաստում են ավտոբուսների եւ բեռնատարների տեխնիկական ոչ բավարար վիճակը, ինչպես նաեւ վատթար ճանապարհները:

Բանգլադեշի մեկ երրորդն անցել է ջրի տակ

Հուլիսի վերջից ավելի քան 830 մարդկային կյանք խլած ջրհեղեղների նոր ալիքը

ծածկել է Բանգլադեշի տարածքի մի խոշոր մաս: Ըստ պաշտոնական տվյալների՝ հեղեղված շրջաններում գտնվում է մոտ 140 միլիոն մարդ:

Տուժած բնակավայրերում զգացվում է սննդամթերքի եւ խմելու ջրի պակաս, աճում է համաճարակների տարածման վտանգը:

Օդերեւութաբանների կանխատեսումներով՝ մուսսոնային անձրեւները դեռ շարունակվելու են:

Երկրաշարժ եւ խուճապ Ինդոնեզիայում

Ինդոնեզիան եւ Հնդկական օվկիանոսի մեծ մասն ընդգրկած աղետը տարածաշրջանի բնակիչներին սպառնում է նոր ավերածություններով եւ զոհերով: Մայրաքաղաք Ջակարտայում եւ մերձակա բնակավայրերում զգացված 7-8 բալ ստորգետնյա ցնցումներից հետո մասնագետները չէին կարողանում որոշել, թե որքան մեծ է ցունամիի հավանականությունը: Փոքր ալիքներ են առաջացել Սումատրայի ափերի մոտ:

Մի քանի միլիոն բնակչություն ունեցող Ջակարտայում աննկարագրելի քաոս է տիրում: Մարդկանց մեծ մասը փորձում է լքել քաղաքը, իսկ բարձրահարկ շենքերը դատարկվել են առաջին ցնցումներից հետո: Պաշտոնական տվյալներով երկրաշարժի զոհ է դարձել տասը մարդ, հարյուրավոր մարդիկ տարբեր վնասվածքներով տեղափոխվել են հիվանդանոց:

Ցունամիի հնարավոր առաջացման նախազգուշացումը խուճապ է բարձրացրել երկրի տարբեր շրջաններում: Այստեղ դեռ շատ լավ են հիշում 2004 թ. հզոր ցունամին, որը հարվածել էր հարավարեւելյան Ասիայի ափերին՝ միայն Ինդոնեզիայում սպանելով 123 հազար մարդու:

Ինքնաթիռն ընկել է միկրոավտոբուսի վրա

Հարավաֆրիկյան Հանրապետությունում՝ Յոհանեսբուրգի մերձակայքում մասնավոր մի ինքնաթիռ ընկել է միկրոավտոբուսի վրա: Պատահարի հետեւանքով օդաչուն եւ ավտոբուսի վարորդը տեղում մահացել են, ուղեւորներից 23-ը ստացել են տարբեր աստիճանների վնասվածքներ:

Պատահարի պատճառները ճշտվում են:

Ֆաինա Թյունիբաբյան

ԱՆՑԱԾ ՇԱԲԱԹ
.. ՔՐՈՆԻԿՈՆ ..

Սեպտեմբերի 11-ին այրվել են. Արարատի մարզի Շահումյան գյուղում՝ 1,5 հա խոտատարածք, Տավուշի մարզի Լուսահովիտ գյուղում՝ 5 հա մացառուտներ, Երեւանի Դուրյան թաղամասում՝ 3 հա եւ Մյասնիկյան պողոտայում՝ 1 հա խոտ:

Տանիքը

Սեպտեմբերի 7-ին հրդեհ է բռնկվել Երեւանի «Նաիրիտ» ԳԱԱԸ-ին կից արտադրամասում:

Այրվել է Բագրատունյաց պողոտայի 12 նրբանցքում գտնվող «Լոռիշեն» ՍՊԸ-ին պատկանող չգործող փայտամշակման արտադրամասի տանիքը՝ 150 քմ մակերեսով:

Խոտը եւ թափքը

Սեպտեմբերի 9-ին Գեղարքունիքի մարզի Գեղահովիտ գյուղում բռնկված հրդեհի հետեւանքով այրվել են Վ. Ճռիկյանին պատկանող «ՄԱԶ» մակնիշի 27 SL 648 պետհամարանիշով բեռնատար ավտոմեքենայի թափքը եւ այնտեղ գտնվող 200 հակ խոտը:

Հրդեհի հետեւանքով 1966 թ. ծնված Վ. Ճռիկյանը ստացել է 2-րդ աստիճանի այրվածք եւ տեղափոխվել Մարտունու հիվանդանոց:

Ըստ բժիշկների՝ տուժածի վիճակը բավարար է:

Տանիքներ ու պահեստավորած խոտ

Սեպտեմբերի 9-ին հրդեհ է բռնկվել Շիրակի մարզի Հովտուն եւ Փոքրաշեն գյուղում: Հրդեհի հետեւանքով այրվել են Վ. Գալոյանի եւ Ե. Արշակյանի անասնագոմերի տանիքները ու պահեստավորած 4 եւ 35 տոննա խոտը:

***

Սեպտեմբերի 10-ին այրվել է Սյունքի մարզի Ծղուկ գյուղի բնակիչ Կ. Թորոսյանի անասնագոմին կից կուտակած 1000 հակ, իսկ Արագածոտնի մարզի Աղձք գյուղի բնակիչ Վ. Վարդանյանի տան պատշգամբում եւ Կոտայքի մարզի Բջնի գյուղի բնակիչ Վ. Աբրահամյանի տան տանիքում կուտակած՝ համապատասխանաբար 110 եւ 290 հակ խոտը:

***

Սեպտեմբերի 12-ին Լոռու մարզի Արջուտ գյուղի բնակիչներից մեկին պատկանող խոտհարքում այրվել է կուտակած 3 տոննա խոտը, իսկ Արարատի մարզի Մարմարաշեն գյուղի 4-րդ փողոցի 4 տանը բռնկված հրդեհի հետեւանքով այրվել են թոնրատունը, 1 տոննա աթարը եւ չոր խոտը:

Շաբաթվա հրդեհը

Պահեստի տանիքն ու պահեստավորած խոտը

Սեպտեմբերի 11-ին, ժամը 11.52-ին, ահազանգ է ստացվել, որ հրդեհ է բռնկվել Մասիսում գտնվող «Գարուն» ՍՊԸ կարի արտադրական միավորման տարածքում:

Ահազանգից անմիջապես հետո դեպքի վայր է մեկնել մեկ մարտական հաշվարկ:

Հրշեջներն արագ իրականացրել են տարածքի հետազոտություն եւ, գնահատելով ստեղծված իրավիճակը, հայտարարել «1 բիս» կանչ: Հրդեհի վայր օգնության են մեկնել Արտաշատի, Մասիսի եւ մայրաքաղաքի թիվ 4 հրշեջ-փրկարարական ջոկատներից մեկական մարտական հաշվարկ, ինչպես նաեւ հրդեհաշիջման շտաբը:

Այրվում էր պահեստի տանիքը: Կարծես հրշեջների աշխատանքին խանգարող ոչինչ չկար. ո՛չ քամի, ո՛չ ջրի պակաս... Հուրախություն հրշեջների՝ արտադրամասի տարածքում կար ջրավազան, ջրի անսպառ աղբյուր: Ու՞ր էր, թե միշտ այդպես լիներ: Սակայն, չնայած օգնող հանգամանքներին, հրշեջներից պահանջվեց 2 ժամ, որ կրակը մարեն: Պատճառը մեկն էր՝ կարի արտադրամասի պահեստի տանիքի մի մասը կառուցված էր փայտից. հարթ ծածկը լցված էր ծղոտով, իսկ ծղոտի վրա փռված էր տոլ: Բնական է, այս բռնկված «միացությունը» դժվարացնում էր հրշեջների աշխատանքը: Նրանց մի մասը կրակի հետ պայքար էր մղում, որ օգնի մյուս խմբին՝ բռնկված տոլն առանցնացնել ծղոտից: Թեեւ, ինչպես իրենք են նշում, մարելու ժամանակ որեւէ վտանգ չկար, սակայն ի՞նչ իմանաս, վառվող փայտն ընկնելիս ի՞նչ հետեւանքների կարող էր հանգեցնել: Բարեբախտաբար, տուժածներ չեղան:

Հրդեհը մարվեց ժամը 13.53-ին: Հրդեհի հետեւանքով այրվել են պահեստի տանիքը՝ 1000 քմ մակերեսով եւ կուտակած 500 հակ խոտը:

Խմել է թունաքիմիկատ

Սեպտեմբերի 8-ին ՖՕՄ (ֆոսֆորաօրգանական միացություն) թունաքիմիկատից թունավորումով Աշտարակի հիվանդանոց է տեղափոխվել Արարատի մարզի Ոսկեվազ գյուղի բնակիչ, 1928 թ. ծնված Հրայր Աբրահամյանը, որը հիվանդանոցում մահացել է:

Մինչ շտապօգնության ժամանումը, լավ կլիներ յուրաքանչյուրս էլ գիտենայինք, թե նման դեպքերում ինչպիսի՞ առաջին օգնություն կարելի է ցուցաբերել տուժածին:

Նախ նշենք, որ ֆոսֆորաօրգանական միացությունները, մասնավորապես՝ քլորոֆոսը, տիոֆոսը, կարբոֆոսը, դիխլոֆոսը եւ այլն, օգտագործվում են միջատների ոչնչացման նպատակով:

Նմանատիպ թունավորումների դեպքում տուժածին հարկավոր է անհապաղ տեղափոխել թունավորված միջավայրից, ապա հանել վարակված հագուստը: Լավ լվանալ մաշկը տաք ջրով եւ օճառով, իսկ աչքերը՝ կերակրի սոդայի 2 տոկոսանոց տաք լուծույթով:

Բերանի միջոցով թունավորման դեպքում տուժածին խմեցնել մի քանի բաժակ ջուր, գերադասելի է կերակրի սոդայի լուծույթ (մեկ բաժակ ջրին՝ մեկ թեյի գդալ սոդա), որից հետո առաջացնել փսխում լեզվարմատի գրգռման միջոցով: Գործողությունը կրկնել 2-3 անգամ, որից հետո տուժածին խմեցնել եւս կես բաժակ 2 տոկոսանոց սոդայի լուծույթ՝ ավելացնելով մեկ ճաշի գդալ ակտիվացված ածուխ: Փսխում կարելի է առաջացնել նաեւ ապամորֆինի 1 տոկոսանոց լուծույթ ներարկելով:

ԼՂՀ ՓԾ լրատվական կենտրոն

Հրդեհներ

Շաբաթվա ընթացքում ԼՂՀ տարածքում գրանցվել է հրդեհի բռնկման 8 դեպք:

Սեպտեմբերի 7-ին Քաշաթաղի շրջանի Կովսական քաղաքում այրվել է 4 հա չոր խոտածածկույթ:

Սեպտեմբերի 9-ին Մարտակերտի շրջանի Վերին Հոռաթաղ գյուղի մերձակայքում այրվել է 4, իսկ Քաշաթաղի շրջանի Ալաշկերտ գյուղում՝ 3 հա չոր խոտածածկույթ:

Սեպտեմբերի 10-ին Մարտունու շրջանի Քաջավան գյուղի խաղողի այգիների մերձակա տարածքում այրվել է 3 հա չոր խոտ:

Զենք-զինամթերք

Սեպտեմբերի 10-ին ահազանգ է ստացվել, որ Ստեփանակերտի բուսաբանական այգում հայտնաբերվել է զինամթերք:

Դեպքի վայր մեկնած սակրավորները պարզել են, որ հայտնաբերվածը հակատանկային ական է՝ առանց պայթուցիչի:

Ավտոպատահար

Սեպտեմբերի 9-ին Շուշի-Բերձոր ճանապարհատվածի 7-րդ կմ-ին տեղի է ունեցել ճանապարհատրանսպորտային պատահար:

«ՎԱԶ-2106» մակնիշի ավտոմեքենայի հինգ ուղեւորներից երկուսը ստացել են տարբեր աստիճանների մարմնական վնասվածքներ եւ տեղափոխվել Ստեփանակերտի հանրապետական հիվանդանոց:

Նաիրա Եղիազարյան

.. ՍԵՅՍՄԻԿ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ ..

Սեպտեմբերի 6-12-ը ՍՊԱԾ-ի սեյսմիկ կայանները Հայաստանի տարածքում գրանցել են մեկ թույլ երկրաշարժ, որը տեղի է ունեցել սեպտեմբերի 11-ին Դիլիջանից 15 կմ հարավ-արեւմուտք, եւ ուժգնությունն էպիկենտրոնային գոտում կազմել է 2-3 բալ:

Տարածաշրջանում. 3 բալ եւ ավելի ուժգնությամբ գրանցվել է երկու երկրաշարժ: Սեպտեմբերի 6-ին Վրաստանի Բոգդանովկա քաղաքից 10 կմ հարավ-արեւելք տեղի է ունեցել 3 բալ ուժգնությամբ սեյսմիկ ցնցում: Նույն օրը Դաղստանի (Ռուսաստան) Ռութուլ քաղաքից 15 կմ հյուսիս-արեւմուտք գրանցվել է երկրաշարժ, որի ուժգնությունը էպիկենտրոնային գոտում կազմել է 5 բալ:

Տարածաշրջանից դուրս. սեպտեմբերի 6-ին 6,1 մագնիտուդով ուժեղ երկրաշարժ է գրանցվել Թայվանի Սուաո քաղաքից 50 կմ հարավ-արեւելք, որը զգացվել է նաեւ էպիկենտրոնից 110 կմ հեռավորության վրա գտնվող մայրաքաղաք Թայբեյում: Սեպտեմբերի 10-ին Կոլումբիայի արեւմտյան ափամերձ շրջանում տեղի է ունեցել 6,8 մագնիտուդով ուժեղ երկրաշարժ: Սեպտեմբերի 12-ին Հնդկական օվկիանոսում, ինդոնեզական Սումատրա կղզու Բենգկուլու քաղաքից 130 կմ հարավ-արեւմուտք, տեղի է ունեցել ուժեղ երկրաշարժ, որն ունեցել է 8,4 մագնիտուդ: Երկրաշարժի հետեւանքով զոհվել է 9, վիրավորվել մոտ 100 մարդ, կան ավերածություններ: Երկրաշարժին հաջորդել են 5 մագնիտուդից բարձր տասից ավելի հետցնցումներ: Ինդոնեզիայի եւ մի շարք հարակից պետությունների իշխանություններ հայտարարել են հնարավոր ցունամիի առաջացման վտանգի մասին, սակայն ավելի ուշ հերքել են դրա հավանականությունը:

ՍՊԱԾ գործակալություն

.. 1-03 .. ԵՐԵՒԱՆ

Անցած շաբաթ շտապօգնության ծառայությունն արձագանքել է 2925 կանչի, հիվանդանոց է տեղափոխվել 365 մարդ: Եղել է մանկական 239 կանչ, հիվանդանոց է տեղափոխվել 64 երեխա:

Գրանցվել են 20 մահ եւ 18 դժբախտ պատահար:

• Սեպտեմբերի 7-ին Թաիրովի 46 հասցեում բարձրությունից ընկել եւ գլխուղեղի ցնցումով «Էրեբունի» բժշկական կենտրոն է տեղափոխվել 14-ամյա Ջ. Հովհաննիսյանը:

• Նույն օրը Նուբարաշենի Դավիթ Բեկի փողոցում տեղի ունեցած վթարի հետեւանքով գլխուղեղի վնասվածքներով «Էրեբունի» բժշկական կենտրոն են տեղափոխվել 21-ամյա Ա. Մինասյանը եւ 26-ամյա Մ. Անտոնյանը:

• Այդ օրը Ջրվեժ գյուղի մոտ վրաերթի է ենթարկվել անձը չպարզված մոտ 30 տարեկան մի տղամարդ, որն անգիտակից վիճակում տեղափոխվել է «Սբ. Գրիգոր Լուսավորիչ» բժշկական կենտրոն:

• Սեպտեմբերի 8-ին Մալաթիայի տոնավաճառի «Գոռ» սուպերմարկետի մոտ վրաերթի ենթարկված 43-ամյա Ռ. Մակարյանը ուղեղի ցնցումով տեղափոխվել է «Արմենիա» բժշկական կենտրոն, իսկ Մաշտոցի պողոտայում՝ «ՍԱՍ» սուպերմարկետի մոտ վրաերթի ենթարկված 60-ամյա Լ. Բագրատյանը՝ «Սբ. Գրիգոր Լուսավորիչ» բժշկական կենտրոն:

• Այդ օրը երակների կտրվածքով թիվ 1 համալսարանական հիվանդանոց է տեղափոխվել 22-ամյա Ա. Վ.-ն:

• Սեպտեմբերի 9-ին Դավիթ Բեկի 9 նրբանցքի 2 փողոցում բարձրությունից ընկել եւ բազմակի վնասվածքներով «Արմենիա» բժշկական կենտրոն է տեղափոխվել Ե. Ենգարյանը:

• Սեպտեմբերի 10-ին Վարդանանց փողոցի 6/1 շենքի շքամուտքի 2-րդ հարկից 60-ամյա Մ. Մարգարյանը գլորվել է 1-ին հարկ եւ ստացել ողնաշարի կոտրվածք: Տուժածը տեղափոխվել է հիվանդանոց, որտեղ էլ գիտակցության չգալով՝ մահացել:

• Նույն օրը բարձրությունից ընկել եւ կողերի կոտրվածքով «Սբ. Գրիգոր Լուսավորիչ» բժշկական կենտրոն է տեղափոխվել Ավանի 44 փողոցի բնակիչ, 67-ամյա Լ. Պողոսյանը:

• Այդ օրն ալկոհոլից թունավորվել եւ «Արմենիա» բժշկական կենտրոն է տեղափոխվել 40-ամյա Ա. Կիրակոսյանը:

• Սեպտեմբերի 11-ին դեղորայքային թունավորումով «Արմենիա» բժշկական կենտրոն է տեղափոխվել 41-ամյա Վ. Շահբազյանը:

• Նույն օրը Բագրատունյաց փողոցում վրաերթի է ենթարկվել եւ գլխուղեղի վնասվածքով «Էրեբունի» բժշկական կենտրոն տեղափոխվել 22-ամյա Ի. Թորգոմյանը:

• Սեպտեմբերի 12-ին Բագրատունյաց փողոցում վրաերթի ենթարկված 46-ամյա Է. Առաքելյանը բազմակի վնասվածքներով տեղափոխվել է «Էրեբունի» բժշկական կենտրոն:

• Այդ օրը երակների կտրվածքով թիվ 1 համալսարանական հիվանդանոց է տեղափոխվել 22-ամյա Ա. Երեմյանը:

Meteo-TV .. ԵՂԱՆԱԿԻ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ ..

Անցած շաբաթ եղանակը հանրապետության տարածքում պայմանավորված էր Արաբական թերակղզուց ներթափանցած արեւադարձային տաք օդային զանգվածների ազդեցությամբ: Ամենուրեք դիտվել է պարզ, առանց տեղումների եղանակ, բարձր ջերմային ռեժիմ: Հատկապես բարձր ջերմաստիճաններ են դիտվել սեպտեմբերի 6-9-ը, Արարատյան դաշտում եւ Երեւանում հասնելով 36-38 ºC-ի, Սյունիքի հովիտներում՝ մինչեւ 40 ºC-ի:

Հանրապետության տարածքում սեպտեմբերի 14-ի օրվա երկրորդ կեսին, 15-ի գիշերը՝ տեղ-տեղ, 17-18-ը՝ շրջանների մեծ մասում սպասվում է անձրեւ եւ ամպրոպ, իսկ 15-ի ցերեկը եւ 16-ին՝ առանց տեղումների եղանակ:

Անհետ կորածի հետքերով

ëÏÇ½µÁª 1-ÇÝ ¿çáõÙ

ԱՆՀԵՏ ԿՈՐԱԾԸ

Օգոստոսի 21-ին ոստիկանության Եղեգնաձորի բաժին է դիմել Արենի գյուղի բնակիչ Շահեն Մանուկյանը եւ հայտնել, որ որդին՝ 1973 թ. ծնված Կարեն Մանուկյանը, օգոստոսի 18-ին դուրս է եկել Արենի գյուղի սրճարանից եւ անհայտ կորել:

ՔՐԵԱԿԱՆ ՔՐՈՆԻԿՈՆԻՑ

«ԱՆԽՂՃՈՐԵՆ... ԴԱԺԱՆԱԲԱՐ...» (Ոստիկանության կայքէջում սպանության բացահայտումը ներկայացված է այս խորագրով):

Ձեռնարկված օպերատիվ-հետախուզական միջոցառումների շնորհիվ պարզվել է, որ օգոստոսի 18-ին, ժամը 23.00-ի սահմաններում, Արենի գյուղի Վերին գյուղ կոչվող տարածքում, խոտի հակի թելով խեղդամահ անելու միջոցով Կ. Մանուկյանին սպանել է 1968 թ. ծնված Համլետ Բ.-ն:

Համլետ Բ.-ն ձերբակալված է:

ՎՏԱՆԳԱՎՈՐ ՎԱՅՐԷՋՔ

Ուշադիր զննելով ու հետախուզելով տեղանքը, փրկարարները հանգեցին այն եզրակացության, որ ծերպերի արանքից ներքեւ կարող են իջնել միայն պարանների միջոցով, այն էլ միայն ամենաուժեղներն ու հմուտները, իրար օգնելով ու «ապահովագրելով»:

Սկսվեց մանրակրկիտ նախապատրաստական աշխատանք. իրականացվեցին անվտանգության բոլոր միջոցառումները, ընտրվեցին փորձառու փրկարարներ՝ ենթասպա Արթուր Սարգսյանը եւ կրտսեր սերժանտ Սարգիս Թադեւոսյանը: Նրանք հատուկ ծածկոցով ու բժշկական շնչադիմակներով սկսեցին վայրէջքը (սպանության յոթերորդ օրն էր):

ՇՆՈՐՀԱԿԱԼՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ

Ուղիղ երեք ժամ տեւեց դիակի դուրսբերումը: Կես մետրանոց ճեղքն առանձին հատվածներում ավելի էր նեղանում: Շոգն ու տապը բոլորին հեղեղել էին քրտինքի մեջ, իսկ ներքեւում շնչելը համարյա անհնար էր: Փրկարարներն ու ոստիկաններն ուս ուսի տված՝ պահել ու համաչափ քաշում էին պարանները:

Պատահական չէր, որ հանրապետական 1-ին ջոկի իսկ օրը Վայոց ձորի մարզի ոստիկանության վարչության պետ Լյուդվիգ Սարգսյանը հատուկ գրություն ուղարկեց Հայաստանի փրկարար ծառայության տնօրեն Էդիկ Բարսեղյանին, շնորհակալություն հայտնելով համագործակցության համար: Իսկ Վայոց ձորի մարզպետ Վարդգես Մաթեւոսյանը միջնորդել էր խրախուսել օպերատիվություն, մասնագիտական բարձր հմտություն ու խիզախություն ցուցաբերած փրկարարներին:

Հայաստանի փրկարար ծառայության տնօրենի հրամանով Վայոց ձորի մարզի աչքի ընկած փրկարարները ներկայացվել են խրախուսանքի:

Եղանակի կանխատեսում՝ հետադարձ հայացքով

Փաստացի տվյալներ անցյալի կլիմայի մասին

Երկրի կլիման փոփոխվում է բնական ճանապարհով: Այդ բարդ համակարգի յուրաքանչյուր բաղադրիչ փոփոխվում է ժամանակի տարբեր սանդղակում: Մթնոլորտում փոփոխությունները կարող են տեղի ունենալ ժամերի ընթացքում, եւ սրա մանրակրկիտ վարքագիծն անհնար է կանխատեսել ոչ ավելի, քան երեք օր առաջ: Օվկիանոսի վերին շերտերն արձագանքում են փոփոխություններին մի քանի տարվա ընթացքում, այն դեպքում, երբ փոփոխությունները խոր օվկիանոսում կարող են ի հայտ գալ նույնիսկ դարեր հետո: Կենդանիների եւ բույսերի կյանքը կենսոլորտում (որն ազդում է տեղումների քանակի եւ ջերմաստիճանի վրա) սովորաբար փոփոխվում է տասնամյակների ընթացքում: Կրիոսֆերան (ձյունը եւ սառույցը) փոփոխվում է դանդաղ. սառույցի հաստ շերտի փոփոխությունները դարեր են տեւում: Երկրասֆերան (երկրի պինդ կեղեւը) փոփոխվում է ավելի դանդաղ, լեռնակազմական պրոցեսները եւ ցամաքների տեղաշարժը (դրեյֆը), որոնք ազդում են քամու եւ օվկիանոսային հոսանքների վրա, տեւում են միլիոն տարուց ավելի:

Գիտություն անցյալի մասին

Անցյալի կլիմաների մասին գիտությունը («պալեոկլիմայագիտությունը»)՝ պատկերացում է տալիս կլիմայի ապագա փոփոխությունների չափերի մասին, որոնք կանխատեսվում են նաեւ կլիմայական մոդելների օգնությամբ: Վերջիններս գիտնականների համար ստեղծում են նաեւ կլիմայական երեւույթները հասկանալու հնարավորություն եւ դրանք մոդելավորելու ունակություն:

Գլոբալ ջերմաստիճանի մասին սիստեմատիկ տվյալներ կան միայն 1860 թվականից: Այս տվյալները վերաբերում են ցամաքի եւ ծովի մակերեւույթի վրա օդի ջերմաստիճաններին: Սակայն դրանք կարիք ունեն մանրամասն ստուգման՝ շեղումների հայտնաբերման նպատակով, որոնք կարող են լինել դիտարկումների մեթոդների եւ դիտարկման տեղի փոփոխության հետեւանքով: Օրինակ, բազմաթիվ օդերեւութաբանական կայաններ տեղադրված են քաղաքներում կամ դրանց կից տարածքներում: Մեծ քաղաքն աճելով՝ կարող է տեղական կլիմայի վրա թողնել տաքացնող ազդեցություն: Այդ ազդեցությունը պետք է հաշվի առնվի, եւ ներկայումս հաշվի է առնվում գլոբալ ջերմաստիճանի մեջ կատարվող փոփոխությունների գնահատման ժամանակ:

Ավելի վաղ շրջանի կլիմայական պայմանների ուսումնասիրությունները հիմնվում են անուղղակի ապացույցների վրա: Օրինակ, լճի փոփոխված մակարդակը կարող է պատկերացում տալ անցյալում տեղումների քանակի եւ գոլորշիացման ծավալի միջեւ եղած տարբերության մասին: Անցյալի մասին տեղեկություններ կարող են պարունակել ծառերի տարեկան օղակները, սառցե վահանները կամ օվկիանոսային նստվածքները: Օգտագործելով չափումների, մոդելների եւ «խուզարկուի աշխատանքի» համակարգի հիման վրա ստացված տվյալներ, գիտնականները կարող են չափման ենթակա մեծությունները վերափոխել (օրինակ՝ սառույցի քիմիական բաղադրությունը) ֆիզիկական փոփոխականների (օրինակ՝ Անտրակտիկայի օդի ջերմաստիճանը 100 հազար տարի առաջ):

Մի քանի միլիոն տարի շարունակ Երկրի վրա իշխում էր սառցապատման դարաշրջանը: Հավաստիորեն կարելի է պնդել, որ սառցապատման պատճառը երկրի առանցքի թեքության փոփոխությունն էր եւ Արեգակի շուրջը նրա պտույտի «դանդաղումը»: Այս կարգի տատանումները փոփոխել են մոլորակի կողմից Արեգակից ստացվող էներգիայի քանակը, հատկապես՝ նրա աշխարհագրական բաշխումը: Սառցապատման ժամանակաշրջանում գլոբալ ջերմաստիճանը նվազել էր 5 աստիճանով եւ սառցե վահանը ծածկել էր Եվրոպայի ու Հյուսիսային Ամերիկայի մեծ մասը: Սառցապատումը կատարվել է մի քանի ցիկլով, եւ ընդհատվել է ավելի տաք միջսառցադաշտային ժամանակաշրջաններով:

Մթնոլորտում ջերմոցային գազերի կոնցենտրացիաների փոփոխությունները հավանաբար նպաստել են սառցապատման ցիկլերի տեւողության ավելացմանը: Երկրի ուղեծրային տատանումների հետեւանքով Արեգակից ստացվող էներգիայի քանակի աննշան փոփոխություններները դեռեւս բավարար չէին, որպեսզի սառցապատման ցիկլերի ընթացքում առաջ բերեին ջերմաստիճանի զանգվածային փոփոխություններ: Սառույցի միջուկի նմուշները ցույց են տալիս, որ զգալի չափով տատանվել են նաեւ ջերմոցային գազերի մակարդակները, որոնք կարող էին նպաստել ջերմաստիճանային տատանումների ամպլիտուդի ավելացմանը:

Անցյալի կլիմայական պայմանների վերականգնումը կարող է օգտագործվել որպես ստուգող չափանիշ՝ կլիմայական մոդելների հիման վրա կազմված կանխատեսումների համար: Պալեոկլիմայական տվյալներով սառցապատման ժամանակաշրջանի կլիմայի մոդելավորման

հիման վրա կատարած «կանխատեսման» համեմատությունը հնարավորություն է տալիս ստուգել կոնկրետ մոդելի օգնությամբ վերականգնված պրոցեսները, որոնք վերաբերում են կլիմայի ապագա փոփոխություններին: Սակայն պալեոկլիմայական ապացույցները կարող են հիմնավոր չլինել. ըստ որոշ աղբյուրների ենթադրվում է, որ արեւադարձային ծովերի ջրի ջերմաստիճանը սառցապատման վերջին ժամանակաշրջանում, ներկա ժամանակների համեմատությամբ ցածր էր 5 աստիճանով, այնինչ՝ ուրիշների ենթադրությամբ՝ 1-2 աստիճանով: Հետեւաբար, դժվար է մոդելին բնորոշ սխալն առանձնացնել անորոշություններից:

Տասը հազար տարի առաջ եղած վերջին սառցապատումից հետո կլիման պահպանվում է բավական կայուն: Գիտնականների վկայությամբ, մարդկային քաղաքակրթության ծագումից ի վեր գլոբալ կլիման փոխվել է 1 աստիճանով: Նախորդ 100 հազար տարվա ընթացքում եղած արտակարգ եւ երբեմն արագ կլիմայական փոփոխությունների համեմատությամբ այս ժամանակաշրջանը դիտվում է որպես համեմատաբար խաղաղ «միջսառցադաշտային» ժամանակաշրջան:

21-րդ դարում ավելի տաք կլինի

Ըստ մոդելների կանխատեսվում է, որ 21-րդ դարի վերջին կլիման կլինի ավելի տաք, քան երբեւէ՝ նախորդ միջսառցադաշտային ժամանակաշրջաններում: Մոտ 125 հազար տարի առաջ 2 սառցապատումների միջեւ ընկած ժամանակահատվածում Եվրոպայի եւ Ասիայի մեծ մասում այսօրվա համեմատությամբ 2 աստիճանով ավելի տաք էր: Սակայն մոդելները կանխատեսում են, որ եթե ջերմոցային գազերի մակարդակը մնա նույնը, ինչպես կանխատեսվում է, ապա 21-րդ դարում այս շրջանների մեծ մասում կդիտվի ավելի բարձր ջերմաստիճան:

Հեռավոր անցյալում կլիմայի կտրուկ փոփոխությունները երկրագնդի կյանքի գոյության վրա, հավանաբար, թողել են ցնցող ազդեցություններ: Երկրի կենսաբանական պատմությունը բնորոշվում է, այսպես կոչված, «տեսակների զանգվածային անհետացման իրադարձություններով», որոնց ընթացքում անհետացել է այն ժամանակ մոլորակի վրա բնակվող տեսակների մեծ մասը: Զանգվածային ոչնչացման համար եղել են բազմաթիվ պատճառներ, սակայն տվյալները վկայում են, որ իրադարձությունների մեծ մասը համընկել է կլիմայի փոփոխության հետ, որն իր չափերով նման է 21-րդ դարի համար կանխատեսվող փոփոխությանը: Հաջորդ 100 տարվա ընթացքում մենք կարող ենք ականատես լինել կլիմայական այնպիսի փոփոխությունների, որոնք չեն դիտվել միլիոնավոր տարիներ առաջ եղած սառցապատման ժամանակից առաջ:

Գագիկ Սուրենյան
Հայպետհիդրոմետի
օդերեւութաբանական
կանխատեսումների բաժնի պետ

ØáÉáñáõÃÛáõÝÝ»ñÇ Ñ³Ýñ³ ·Çï³ñ³Ý

Կրոնն ափիոն է ժողովրդի համար

Այս արտահայտությունը չի պատկանում ո՛չ Մարքսին, ո՛չ էլ Լենինին, ինչպես կարծում են շատերը: Այս խոսքերի հեղինակը գերմանացի գրող Նովալիսն է: 1798 թ. վերջինս գրել է. «Ձեր, այսպես ասած, կրոնը մարդկանց վրա ափիոնի նման է ազդում: Այն ավելի շատ ցավ է պատճառում, իսկ հետո խլացնում այն՝ ուժ տալու փոխարեն»:



Ի դեպ, Մարքսին ու մարքսիստներին վերագրվող շատ արտահայտություններ նույնպես իրենց չեն պատկանում: Օրինակ՝ «Պրոլետարներն իրենց շղթաներից բացի կորցնելու ոչինչ չունեն» (Ժան Պոլ Մարատ), «Պրոլետարներ բոլոր երկրների, միացե՛ք» (Կառլ Շապպեր), «Պրոլետարիատի դիկտատուրա» (Բլանկի), «Յուրաքանչյուրից՝ ըստ իր ընդունակությունների, յուրաքանչյուրին՝ ըստ իր պահանջների» (Լուի Բլանկ) եւ այլն:

Այնուամենայնիվ, այն պտտվում է

Այս խոսքերը վերագրում են Գալիլեո Գալիլեյին, սակայն իրականում նա երբեք նման բան չի ասել: Այդ մասին վկայություններ չկան ո՛չ ինվիզիցիայի արձանագրություններում, ո՛չ նրա նամակների, ո՛չ էլ նրան ժամանակակից որեւէ այլ գրավոր աղբյուրի մեջ: Առաջին անգամ այս պատմական խոսքերի մասին նշվում է աբբատ Իրելիի «Գրական աղբյուրներ» աշխատության մեջ, որը հայտնի է իր անճշտություններով: Ամենայն հավանականությամբ, աբբատն ինքն է հորինել այդ արտահայտությունը: Դրա լայն տարածումը բացատրվում է նրանով, որ այն արտահայտում էր կաթոլիկ եկեղեցու նկատմամբ տարած հաղթանակը, իսկ Գալիլեյը վերածվում էր արդարության համար նահատակված մարտիկի:



Նապոլեոնին հաղթեց ռուսական ձմեռը

Նապոլեոն Բոնապարտին պատկանող «Մեզ հաղթեց ձմեռը, մենք դարձանք ռուսական կլիմայի զոհը» արտահայտությունը սեփական պարտությունն ու սխալներն ընդունել չցանկանալու փորձ էր:

Իրականում դեպի Ռուսաստան կատարած ողջ արշավի ընթացքում եղանակի ջերմաստիճանը միջինից նույնիսկ բարձր է եղել: Պահպանվել են ականատեսների վկայություններ այն մասին, որ հոկտեմբերին, երբ ֆրանսիացիներն սկսել են մոտենալ Կիեւին ու Վարշավային, ջերմաստիճանը եղել է +10, իսկ Ռիգայի մոտ՝ +7 աստիճան: Նույնիսկ նոյեմբերի վերջին, Բերեզինա գետի հայտնի անցման ժամանակ, գետի մակերեւույթը դեռ սառույցով պատված չէր: Անդրե Մորուայի այն պնդումը, թե ռուսները պայթեցնում էին գետի վրա առաջացած սառույցի հաստ շերտը, ավելին չէ, քան հորինվածք:

Դեկտեմբերի 3-ի իր նշումների մեջ Նապոլեոնը գրում է. «Նոյեմբերի 14-ի լույս 15-ի գիշերը ցուրտն անսպասելիորեն ուժեղացավ, ջերմաստիճանն ընկավ մինչեւ - 18 աստիճան: Բոլոր ճանապարհները պատված են սառույցով, յուրաքանչյուր գիշեր ոչ թե հարյուրավոր, այլ՝ հազարավոր ձիեր են մահանում: Մենք ստիպված ենք այստեղ թողնել կամ ոչնչացնել մեր ունեցած զինամթերքի ու թնդանոթների մեծ մասը»: Ցուրտն իսկապես ուժեղանում է, բայց շատ ավելի ուշ: Ռուսաստանը լքող ֆրանսիական բանակի ահռելի մեծ կորուստների պատճառն արշավի վատ պլանավորումն էր, ոչ թե ռուսական ձմեռը: Հեռանալու պահին նրանք ձիերի համար ընդամենը մեկ շաբաթվա պաշար ունեին: Կենդանիներն այդ պատճառով էին հազարներով սատկում, ոչ թե ցրտի:

Նապոլեոնին հավատում են այն պատճառով, որ այդ տարի Ռուսաստանում իսկապես շատ ցուրտ է լինում, բայց ոչ թե դեկտեմբերին, այլ՝ ֆրանսիացիների հեռանալուց մի քանի շաբաթ հետո: Արշավից տուն վերադարձած սակավաթիվ զինվորները չէին ցանկանում

մերկացնել իրենց կուռքի սուտը եւ խոստովանել ամոթալի պարտությունն ու փախուստը: Այդ պատճառով էլ շատերը մեծ հաճույքով հավատում են ռուսական դաժան ձմռան մասին պատմություններին:

«Երկաթե վարագույր» արտահայտության հեղինակն Ուինսթոն Չերչիլն է

1946 թ. մարտին Չերչիլը, դիմելով ԱՄՆ-ի Միսսուրի նահանգի Վեսթմինսթերյան քոլեջի ուսանողներին, խոսում է ֆաշիզմի դեմ հաղթանակ տարած երկրների միջեւ առաջացած տարաձայնությունների մասին եւ ասում. «Բալթիկ ծովից մինչեւ Ադրիատիկ ծով երկաթե վարագույր է իջել ողջ Եվրոպայի վրա»:

Սառը պատերազմի նախաշեմին այդ խոսքերը չափազանց տպավորիչ էին եւ անմիջապես հայտնվեցին թերթերի առաջին էջերում: Այդ ժամանակից ի վեր «Երկաթե վարագույր» արտահայտությունը վերագրում են Չերչիլին, սակայն իրականում առաջին անգամ այդ խոսքերն օգտագործել է Բելգիայի Ելիզավետա թագուհին՝ խոսելով 1914 թ. գերմանացիների հարձակման մասին. «Այժմ իմ եւ Գերմանիայի միջեւ, կարծես, երկաթ վարագույր լինի իջած»:

1920-ական թվականներին Բեռլինում Մեծ Բրիտանիայի դեսպանն այսպես է մեկնաբանում գերմանացիների եւ ֆրանսիացիների միջեւ սպասվող անվտանգության համաձայնագրի կնքումը. «Ես շարունակում եմ մնալ այն կարծիքին, որ թե՛ ֆրանսիացիների, թե՛ գերմանացիների համար լավագույն պաշտպանությունը երկաթե վարագույրն է: Ի նկատի ունեմ որեւէ չեզոք գոտու ստեղծումը: Գուցե նման երկաթե վարագույրի վերածել Լա Մա՞նշը»:

1945 թ. փետրվարին Բեռլինի «Դաս Ռայխ» թերթում հայտնվում է «Երկաթե վարագույրից այն կողմ» վերնագրով մի հոդված: Ամսվա վերջում արդեն նույն թերթը տպագրում է Գեբբելսի ելույթը, որտեղ երկու անգամ հիշատակվում է Գերմանիայի եւ Ռուսաստանի մեջտեղ եղած երկաթե վարագույրի մասին:

Ինչպես են արարել հանճարները

Ինչպե՞ս է մարդու ուղեղում ծնվում միտքը՝ երաժշտական ստեղծագործությունը, բանաստեղծության տողը, մաթեմատիկական ֆորմուլան, փիլիսոփայական գաղափարը:

Հենց իրենք, հանճարները չեն կարողանում որեւէ բացատրություն տալ: Նրանք բոլորն էլ միայն միաբերան պնդում են, որ հետագայում գեղարվեստական ստեղծագործություն կամ գիտության ձեռքբերում դարձող բանը ծնվում է ինքն իրեն, ինքնաբերաբար: «Այն արարվում է ինչ-որ հաճելի երազում», - ասում էր Ռաֆայելն իր ստեղծագործության մասին: **Մոցարտը** պատմում էր, որ երաժշտությունն իր մեջ հայտնվել է «ակամա, գեղեցիկ, շատ պարզ երազում»: Իսկ Գյոթեն խոստովանել է. «Եվ քանի որ այս ստեղծագործությունը («Երիտասարդ Վերթերի տառապանքները») ես գրել եմ անգիտակցաբար, լուսնորդի նման, նույնիսկ ինքս ապշեցի, երբ անցա դրա խմբագրմանը»:



Շատ նկարիչների համար ստեղծագործության արարման խթան դարձել է տեսիլքը: Ռուս գեղանկարիչ **Ի. Կրամսկոյը** «Հիսուսն անապատում» նկարի վրա աշխատելու ժամանակ երկար մտածել է, աղոթել, տանջվել եւ «հանկարծ տեսել է մի պատկեր, որը խոր մտածմունքի մեջ էր»...

Այս առումով ընդհանրապես կան շատ վկայություններ եւ խոստովանություններ:

Մոպասանն աշխատելիս է եղել գրասեղանի մոտ, երբ հանկարծ նրա սենյակի դուռը բացվել է, եւ սենյակ է մտել... իր սեփական պատկերը, նստել նրա դիմաց, գլուխը իջեցրել ձեռքերի վրա, եւ սկսել նրան թելադրել, թե ինչ գրի: Երբ նա ավարտել է՝ տեսիլքը վեր է կացել եւ անհետացել:

Նման վկայություններն իրավունք են տալիս ենթադրելու, որ, ամենայն հավանականությամբ, ստեղծագործությունը՝ արարումն անցնում է ենթագիտակցության ոլորտով, որից հետո միայն սկսվում է գիտակցումը: Իսկ այս ամենի հիմքը դրվում է տարիների քրտնաջան աշխատանքի շնորհիվ: Դա մի շրջան է, որի ընթացքում հասունանում է առաջադրված խնդրի լուծումը:

Շատերն այն գտնում են քնի ժամանակ: Դրա վառ ապացույցն է՝ քնի մեջ **Դ. Մենդելեեւի** տեսած քիմիական տարրերի պարբերական աղյուսակը, որը հնարավոր դարձավ այն բանից հետո, երբ իրական կյանքում նա այդ ուղղությամբ կատարել էր հսկայական նախապատրաստական աշխատանք:

Անգլիացի պոետ Քոլրիջը քնել է ուղեւորության գրառումները կարդալիս, եւ քնի ժամանակ, որը տեւել է երեք ժամ, տեսել է ավելի քան 200 բանաստեղծություն, որոնք նա, արթնանալով, անմիջապես գրի է առել:

Իտալացի կոմպոզիտոր **Ջ. Տարտինիի** երազում հայտնվել է սատանան եւ մեծագույն վարպետությամբ նրա համար նվագել մի սոնատ: Արթնանալով՝ Տարտինին գրառել է այն եւ անվանել «Սատանայի դայլայլ»:

ß³ñáõÝ³ ÏáõÃÛáõÝÁ 6-ñ¹ ¿çáõÙ

Ինչպես են արարել հանճարները

ëÏÇ½µÁª 5-ñ¹ ¿çáõÙ

Ա. Գրիբոյեդովը 1821 թվականին Պարսկաստանում եղած ժամանակ՝ շատ էր կարոտել Պետրեբուրգը, Մոսկվան, իր ընկերներին, հարազատներին եւ ծանոթներին, երազել թատրոնի մասին, որը շատ էր սիրում: Մի անգամ նա երազ տեսավ, որ իր ընկերների շրջապատում պատմում է մի կատակերգության մասին, իբր թե ինքն էր գրել, եւ նույնիսկ դրանից կարդում է որոշ հատվածներ: Առավոտյան նա «գծագրեց» «Խելքից պատուհասի» պլանը եւ հիշելով այն ամենն, ինչ արտաբերել էր երազում՝ հորինեց առաջին արարի մի քանի տեսարան:

Շումանը երազում Ֆրանց Շուբերտից ստացավ մի թեմա, որն ավելացրեց իր ստեղծագործություններից մեկում:

Ա. Տոլստոյը թողել է այսպիսի մի վկայություն. «Իմ հիվանդության ժամանակ մի գիշեր ես ձեռնամուխ եղա գրելու փոքրիկ մի բանաստեղծություն, որ ծագել էր գլխումս: Ես գրեթե գրել էի մի էջ, երբ իմ մտքերը մթագնեցին, եւ կորցրեցի գիտակցությունս: Ուշքի գալով, ես ցանկացա կարդալ գրածս: Թուղթը դրված էր իմ առջեւ, մատիտը նույնպես: Ոչինչ անսովոր տեղի չէր ունեցել, ինձ շրջապատող ամեն բան նույնն էր, մինչդեռ ես ոչ մի տող չճանաչեցի իմ բանաստեղծությունից: Սկսեցի փնտրել, տակնուվրա արեցի թղթերս ու չգտա իմ գրածը: Ստիպված էի ընդունել, որ գրել եմ անգիտակցաբար, իսկ դրա հետ մեկտեղ ինձ համակել էր ինչ-որ տանջալից ցավ. անպայման ուզում էի հիշել մի բան, ուզում էի կառչել ինձանից փախչող ինչ-որ մտքից: Այդ տանջալից վիճակը դառնում էր այնքան ուժեղ, որ արթնացրեցի կնոջս: Նա հրամայեց անմիջապես գլխիս դնել սառույց եւ ոտքերիս՝ մանանեխի սպեղանի: Այնժամ հոգեկան հավասարակշռությունս վերականգնվեց: Բանաստեղծությունը, որը ես գրել եմ անգիտակցաբար, տպագրվեց «Վեստնիկ Եվրոպիում»: Համենայն դեպս այս երեւույթը բավական տարօրինակ էր: Իմ կյանքում ես երեք անգամ վերապրել եմ նման զգացողություն... շատ ծանր եւ նույնիսկ սարսափելի: Գրածիս մեջ կա մոտալուտ մահվան պես մի զգացողություն»:

Ութ օր անց Ա. Կ. Տոլստոյը մեռավ:

Կոմպոզիտոր Ա. Սկրյաբինի կենսագրության մեջ կա վկայություն, որ ստեղծագործելուց առաջ նրա մեջ միշտ առաջանում էր հիստերիայի նոպա: Նրա մորաքույրը Բելյաեւին գրված նամակում հայտնում էր ջղային նոպաների մասին, որոնք, նոր երաժշտական մտքեր ծնվելուց առաջ, լինում են իր զարմիկի մեջ. «Նոպան սկսվեց գիշերը, սկզբում նա սառեց, եւ ես չգիտեի ինչով նրան տաքացնել, երբեմն ինչ-որ բան էր կատարվում նրա սրտի, հատկապես՝ գլխի հետ, ես ոչինչ չէի հասկանում. ասում էր, որ ցավ չի զգում, մինչդեռ նա արագ հանգստացավ, երբ ես ձեռքերով ամուր բռնեցի նրա գլուխը: Այս բոլորն ավարտվեց առավոտյան՝ դառնակսկիծ արցունքներով ու հիստերիայով, որից հետո նա հանգստացավ, բայց ոչ մի վայրկյան չքնեց: Եվ այդպես նա ուժասպառ պառկած մնաց մինչեւ երեկոյան չորսը»:

Ահա, թե ինչ է գրում Հեկտոր Բեռլիոզը. «Որոշ երաժշտական ստեղծագործությունների ձայների ժամանակ ինձ թվում է, որ իմ հոգին ընդարձակվում է, ես ընկնում եմ վերերկրային երանության գիրկը, հոգեկան ապրումները շուտով ծնում են արյանս մեջ մի տարօրինակ անհանգստություն, զարկերակս սկսում է արագ խփել, արցունքներ... Առաջանում են մկանների հիվանդագին կծկումներ, դող՝ բոլոր անդամներում, ձեռքերի եւ ոտքերի թմրում, դեմքի եւ լսողական նյարդերի մասնակի կաթված, ես ոչինչ չեմ տեսնում, վատ եմ լսում... Գլխապտույտ... գիտակցության կիսով չափ կորուստ»:

Ա. Դարգոմիժսկին «Քարե հյուր» օպերայի ստեղծման վերաբերյալ գրում է. «Նյարդային հոգեվիճակի ժամանակ իմ մեջ առանձնացավ ստեղծագործական ջիղը, ինչպես պատահել էր երիտասարդ ժամանակ: Այն, իրապես, տարօրինակ երեւույթ է՝ դաշնամուրի մոտ նստած, հիվանդ եւ կորացած, ես 5 օրում ավարտեցի իմ «Քարե հյուրը», իսկ առողջ ժամանակ՝ երկու ամիսն էլ չէր բավարարի»:



Ռիչարդ Վագների մեջ վարակիչ հիվանդությունն ուղեկցվել է ֆիզիկական եւ նյարդային հյուծվածությամբ, որը հանգեցրել է ստեղծագործական եռանդի: Լինելով մթագնած վիճակում, նա ստեղծեց «Ոսկե Հորդա» դրամայի նախերգանքը:

Ուժեղ հիվանդության ժամանակ Վալտեր Սկոտը թելադրել է «Այվենհո» վեպը: Առողջանալով, նա դրա մասին չի պահպանել հիշողության ոչ մի նշույլ, բացառությամբ՝ վեպի հիմնական գաղափարը, որը մտահղացել էր մինչ հիվանդությունը:

Քիչ չէ այն ստեղծագործական եռանդը, որը մարդու մեջ ծնվում է ալկոհոլի կամ թմրամիջոցի ազդեցության տակ: Եվ շատ ճանաչված տաղանդավոր մարդիկ գիտակցված դիմել են այդ միջոցին:

Գրող եւ կոմպոզիտոր է. Հոֆմանը միայն ուժեղ ալկոհոլի ազդեցության տակ էր արարում: Դրա հետ մեկտեղ հասնում էր չտեսնված մեծ վարպետության: Իհարկե, նա գռեհիկ հարբեցող չէր, բայց գիտակցաբար տարբեր խառնուրդներից պատրաստում էր ալկոհոլային ըմպելիքներ, որպեսզի առաջացներ ստեղծագործական «նոպա»:



Էդգար Պոն նույնպես գնացել է այդ ճանապարհով: Նրա ստեղծագործություններն ալկոհոլից ծնված ներշնչանքի արդյունք են:

Ըստ Մոպասանի խոստովանության, եթե ոչ բոլոր, գոնե ստեղծագործության որոշ հատվածներ գրվել են թմրամիջոցի ազդեցության տակ: Մոպասանն այն սկսեց օգտագործել նեւրոլոգիայի դեմ պայքարի ժամանակ եւ քիչ-քիչ հակվեց դրան: Եթերի ազդեցությունը նա այսպես էր նկարագրում. «Ոչ քուն է, ոչ երազ, ոչ հիվադագին տեսիլք, այլ՝ մտածողության անսովոր սրացում, իրերը տեսնելու, կյանքը դատելու եւ գնահատելու նոր կերպ, լիովին վստահ, որ այդ կերպը հենց իրականությունն է»:



Ինչպես այստեղ չհիշել **Ֆ. Դոստոեւսկուն,** նրա «Ապուշի» տողերից մեկը. «Գերագույն կյանքը պարտական է միայն հիվանդությանը, միայն նորմալ կենցաղի պառակտմանը, եւ եթե այդպես է, ապա նորմալ կյանքը ոչ թե բարձրագույն, այլ, ընդհակառակը՝ ցածրագույն կարգի կյանք է»:

Այն, որ տաղանդավոր մարդիկ ունեն իրենց տարօրինակությունները, ոչ մեկի համար գաղտնիք չէ: Կենսագիրների համար այդպիսի «տարօրինակությունները» իրենց կերպարների բնութագրականների ցայտուն մանրամասնություններ են, քաղքենիների համար՝ ծաղրուծանակի եւ բամբասանքների առարկա, գիտնականների համար՝ հետազոտման նյութ: Իսկապես, ինչո՞ւ խելացի, տաղանդավոր մարդիկ մինչեւ աշխատանքին անցնելը, հաճախ իրականացնում են որեւէ անհեթեթ արարողություն:

Ռիչարդ Վագները ստեղծագործելու ժամանակ աթոռների եւ կահույքի վրա փռում էր պայծառ մետաքսե կտորներ եւ պարբերաբար դրանք շոշափում: Նա իրեն շրջապատել էր մեծաշուք շռայլությամբ՝ այն նրան տալիս էր կոմպոզիցիայի նկատմամբ ներշնչանք:

Ֆրիդրիխ Շիլլերը ստեղծագործական «նոպայի» ժամանակ սեղանին դնում էր նեխած խնձորներ:

Իոսիֆ Հայդնը ներշնչվում էր փայլուն առարկայով՝ ուշադիր ուսումնասիրելով իր ձեռքի մատանու ալմաստը: Առանց այդ մատանու երաժշտությունը չէր ծնվում:

Վիկտոր Հյուգոն, առանց իր բրոնզե շնիկն առջեւն ունենալու, չէր կարողանում աշխատել:

Պ. Չայկովսկին լիակատար միայնության եւ լռության կարիք էր զգում: Իսկ Վալտեր Սկոտը, հակառակը, գերադասում էր աշխատել երեխաների շրջապատում, որոնք խաղում են աղմկոտ խաղեր:

Էմիլ Զոլան աշխատանքի ժամանակ իրեն կապում էր աթոռին:

Շառլոտա Բրոնտեն անընդհատ շեղվում էր գրելուց եւ գնում էր խոհանոց կարտոֆիլ մաքրելու, հետո վերադառնում էր գրասեղանի մոտ՝ նոր ստեղծագործական եռանդով:

Ալֆրեդ Մյուսեն իր բանաստեղծությունները հորինում էր տոնական մոմի լույսի տակ եւ լիակատար միայնության մեջ նստած սեղանի առաջ, որի վրա կար երկու սպասք՝ մեկն իր եւ մյուսը սիրելի՝ երեւակայական կնոջ համար, որն ահա, ուր որ է կգա ու իր հետ կընթրի:

Գլյուկն աշխատանքի էր անցնում մանրակրկիտ ընտրած հագուստով, իսկ դաշնամուրը տեղադրում էր արեւի տակ: Հենց այդ պայմաններում էլ նա ստեղծել է «Իֆիգենիան Ավլիսում» եւ «Իֆիգենան Տավրիդայում» օպերաները:

Ի. Տուրգենեւը Գ. Ֆլոբերին խոստովանել է. «Ես իսկապես աշխատում եմ միայն այն ժամանակ, երբ ինձ մոտ անքնություն է»:

Գյոթեն խոստովանել է, որ գերադասում է գրել մատիտով, քանի որ փետուրի ճռռոցը եւ թանաքի ցայտերը սեղմումոչնչացնում են հղացած ստեղծագործությունը:

Արիստոտելը ստեղծագործաբար կարող էր աշխատել միայն շարժման մեջ լինելով, այդ պատճառով նա իր աշակերտների հետ միշտ շարժվում էր, որի հետեւանքով իր դպրոցը կոչվեց «ճեմական» (հունարեն peripateo, որը նշանակում է ճեմում կամ զբոսնում եմ):

Գերմանացի փիլիփոսա Կանտը Spectator անգլիական ամսագրից բերել է օրինակ՝ մի փաստաբան ճառ ասելիս սովորություն ուներ մատին թել փաթաթել: Մի անգամ նա կորցրեց այն՝ կորցնելով նաեւ մտքի թելը:

Տվածուրիկ եւ ձեռքբերովի

Հոգեբաններն առանձնացնում են օժտված մարդկանց երկու տեսակ՝ «Աստծուց» եւ «իրենցից» օժտված տաղանդներ:

«Աստծուց» օժտված տաղանդները, որպես կանոն, արդեն իսկ մանուկ տարիքից առանձնանում են իրենց ընդունակություններով, անպայման նրանց աշխատասիրությունը լրացվում է ակամա ստեղծագործական իմպուլսով՝ կազմելով նրանց հոգեկան կյանքի հիմնամասը: Այդպիսիք են՝ Մոցարտը, Ռաֆայելը, Պուշկինը:

«Իրենցից» օժտված տաղանդների մեջ ընթացքը դանդաղ է, երբեմն էլ՝ ուշացած: Այդպիսինք են՝ Լոմոնոսովը, Վան-Գոգը, Վագները եւ այլն: Այս մարդկանցից շատերը մանկապատանեկան տարիքում թողել են ոչ այնքան ընդունակի տպավորություն: Ջեյմս Ուատին, Ջոնաթան Սվիֆտին մանուկ հասակում համարել են բացարձակապես անընդունակ: Նյուտոնին չէր հաջողվում գլուխ հանել դպրոցական մաթեմատիկայից: Կառլ Լիննեյին կանխատեսել էին կոշկակարի «կարերիա»: Իսկ **Չառլզ Դարվինին** հայրն ասում էր, որ նա «կլինի ընտանիքի խայտառակությունը»:



«Իրենցից» օժտված տաղանդներին միացնում է մեկ ընդհանուր հատկություն՝ գիտելիքների եւ գործունեության հսկայական ծարավը, ֆենոմենալ աշխատունակությունը: Ձգտելով նպատակակետին, նրանք հաղթահարում են իրենց ֆիզիկական եւ հոգեկան ցավերը, աշխատում են ուժասպառության աստիճանի: Ի՞նչն է նրանց ստիպում համառորեն շարժվել առաջ: Գուցե չբացահայտված հնարավորությունների անորոշ զգացումը:

Կա նաեւ բացատրման այլ վարկած:

Բացառված չէ, որ այդ մարդիկ իսկապես եղել են սովորական անհատներ, մինչ սահմանված պահը, երբ տեղի է ունեցել ինչ-որ իրադարձություն, որը կենսագիրների կողմից չի արձագրվել՝ աննշան լինելու պատճառով: Եվ դրանից հետո նրանց մեջ արթնացել է տաղանդը: Պատմության մեջ հայտնի են այդպիսի դեպքեր:

Այսպես, Մոսկովյան միտրոպոլիտ Մակարը եղել է հիվանդոտ, ընդհանրապես՝ ուսման նկատմամբ ոչ մի հակում չունեցող երեխա: Մի անգամ ճեմարանում խաղի ժամանակ քարով նրա գլուխը ջարդեցին: Եվ ի՞նչ: Վերքերից լավանալով, Մակարը սկսեց ցույց տալ հիանալի ընդունակություններ եւ հետագայում ճանաչվեց որպես հայտնի եկեղեցական գործիչ ու գրող:

Պոետ Կոնստանտին Բալմոնտն իր ինքնակենսագրության մեջ պատմում է, որ որոշել էր ինքնասպան լինել՝ իրեն նետել է երրորդ հարկի պատուհանից, բայց կենդանի է մնացել: Անկողնում մնացել մեկ տարի, որից հետո նրա մեջ տեղի է ունեցել «մտավոր արթնացման եւ կենսասիրության լուսարձակում»:

Էմիլ Զոլան 19 տարեկանում, ինչպես ինքն է գրում, հիվանդացավ եւ քիչ էր մնում ուղեղի բորբոքումից մեռներ: «Ես հաճախ մտածում էի, որ այս հիվանդությունը հսկայական ազդեցություն թողեց իմ բնավորության եւ հետագա կյանքի վրա, եւ, գուցե, փոխեց ուղեղը, անգամ նպաստեց հայտնի ունակությունների ծաղկմանը»:

Տպավորություն է ստեղծվում, որ ֆիզիկական եւ հոգեկան վնասվածքները մարդու գիտակցության մեջ մտցնում են առաջընթաց, որը նրան դարձնում է տաղանդավոր: Բնականաբար, սա խիստ հազվադեպ երեւույթ է, այլապես, բոլորն էլ իրենց կյանքում ստանում են տարբեր վնասվածքներ, հետեւաբար, բոլորն էլ կդառնային հանճար:

Պարզ է, որ այստեղ դեր ունեն նաեւ ինչ-որ անհայտ գործոններ: Ի՞նչ իմանաս: Բայց, արժե՞ իմանալ:

Ճիշտ է Գյոթեն. «Այն ինչ ստեղծում են տաղանդները, ստեղծում են անգիտակցաբար, եւ ոչ մի երեւելի ստեղծագործություն չի կարող լինել կատարյալ՝ սովորական մտածողությամբ»:

ÆÝã å»ë å ³Ñå ³Ý»É »ñ»Ë ³ÛÇ ï»ëáÕáõÃÛáõÝÁ

ëÏÇ½µÁª Ý³ ËáñÏ¹ Ñ³Ù³ñáõÙ

Աչքերն ու սնունդը

Աչքի այն մկանները, որոնք հերթականությամբ են աշխատում, երբ երեխան մե՛կ հեռու է նայում, մե՛կ մոտիկ, չափազանց թույլ են: Դրանք պետք է ամրացնել հատուկ վարժություններով եւ օգտակար նյութերով հարուստ սննդի միջոցով: Այս առումով ակնաբույժների սիրելին գազարն է: Անհրաժեշտ է միայն հիշել, որ առանց ճարպերի օգնության կարոտինը լավ չի յուրացվում: Սա նշանակում է, որ գազարը պետք է շոգեխաշել կամ թթվասերով ու բուսական յուղով աղցաններ պատրաստել: Գազարից բացի, բժիշկները խորհուրդ են տալիս տեսողությունը լավացնելու համար նաեւ շատ ուտել ծիրանաչիր, խուրմա, պոմիդոր, հաղարջ, չիչխան, հապալաս, կիտրոն եւ այլն:

Աչքերն ու դպրոցը

Սպիտակ ժապավեններ, մեծ ծաղկեփունջ, վառ ժպիտներ... Սովորաբար սեպտեմբերի 1-ից ավելի շատ սա է տպավորվում: Դա, իհարկե, շատ լավ է, սակայն հաճախ ծնողները մոռանում են, որ դեռ երեկ բակում անհոգ վազվզող երեխայի փոքրիկ, թույլ ուսերին այդ օրվանից շատ մեծ ծանրաբեռնվածություն է ընկնում: Մաքուր օդին անցկացվող աշխույժ խաղերը փոխարինվում են հաճախ անհարմար հագուստով, նեղլիկ դասասենյակում ժամերով անշարժ նստելով: Սենյակի լուսավորությունը լավը չէ, գրատախտակը փայլում է դրա վրա ընկնող արեւի ճառագայթներից, եւ ի լրումն դրան՝ փոքրիկը պետք է ինչ-որ բան գրի տետրի նեղ ու հաճախ լավ չերեւացող տողերի վրա: Որոշ ծնողներ երեխային ստիպում են տնային աշխատանքները կատարելիս նախ մի քանի անգամ սեւագրություն անել, ապա արտագրել այն տետրի մեջ, որն աչքերի համար կրկնակի լարվածության պատճառ է:

Զարմանալի չէ, որ շատ փոքրիկների տեսողությունը դպրոց գնալուց հետո աստիճանաբար սկսում է թուլանալ: Առավել զարմանալի է այն, որ նրանցից ոմանք կարողանում են պահպանել սուր աչքը:

Այսպիսով, կրտսեր դպրոցի երեխաների աչքերը ենթարկվում են լուրջ ծանրաբեռնվածության, որին նրանք բոլորովին պատրաստ չեն: Պատկերացնելու համար, թե դա ինչի կարող է հանգեցնել, եկեք ծանոթանանք աչքի կառուցվածքին ու որոշ հատկությունների:

Մարդկային աչքն օպտիկական համակարգ է, որը, պատկերը հստակեցնելու համար, դրվում է շարժման մեջ: Այդ առումով այն կարելի է համեմատել հեռադիտակի հետ: Այն ունի պատկերի հստակությունը կարգավորող «պտուտակ», որի միջոցով մարդը կարողանում է լավացնել պատկերի որակը: Աչքի համար այդպիսի «պտուտակի» դեր են կատարում մկանները, որոնք հետ ու առաջ են շարժում աչքի բյուրեղիկը: Սակայն ինչպես եւ յուրաքանչյուր մկան, դրանք նույնպես կարող են երկարատեւ լարված աշխատանքի ու ծանրաբեռնվածության հետեւանքով «հոգնել»: Այդ ժամանակ աչքը կորցնում է պատկերի շարժմանը կամ փոփոխությունների արձագանքելու ընդունակությունը: Եթե մկաններին թուլանալու եւ հոգնածությունը թոթափելու հնարավորություն չտրվի, ապա երեխայի տեսողությունը կվատանա:

Շատ հաճախ բժիշկները դա անվանում են «սուտ կարճատեսություն» կամ հոգնած աչքերի ախտանիշ: Այս ախտորոշման միակ մխիթարական հանգամանքն այն է, որ սա դեռ անդառնալի գործընթաց չէ եւ հնարավոր է կանխել: Սակայն եթե ժամանակին բժշկի չդիմել, այն կարող է վերածվել իսկական կարճատեսության:

Ինչպե՞ս օգնել հոգնած աչքերին: Հաճախ բժիշկներն աչքի բիբը լայնացնող կաթիլներ են նշանակում: Մկանների վրա դրանք թուլացնող, հանգստացնող ազդեցություն են ունենում: Իսկապես, 7-10 օր տեւող այդպիսի բուժումից հետո զգալի դրական արդյունք է լինում, եւ երեխայի տեսողությունը լավանում է: Սակայն արդյոք այդ արդյունքը կայու՞ն է: Ակնաբույժների դիտարկումներով դրանից հետո նույն խնդիրները վերսկսվում են, եւ երեխայի տեսողությունն սկսում է ավելի արագ վատանալ: Դա լինում է այն պատճառով, որ աչքի մկաններն արհեստականորեն հանգստացնելը դրանք մարզելու փոխարեն ավելի է թուլացնում:

Ներկայումս բժիշկները խորհուրդ են տալիս հույսը չդնել միայն աչքի հանգստացնող կաթիլների վրա եւ օգտվել բուժման ավելի երկարատեւ ու կայուն արդյունք տվող եղանակներից: Դրանցից են.

* տեսողության հիգիենայի պահպանումը.
* երեխայի ֆիզիկական աշխուժության ապահովումը՝ օրգանիզմի ընդհանուր թուլացման եւ կոփման համար (այդ նպատակի համար օգտակար է լողով զբաղվելը).
* լիարժեք ամառային հանգիստ քաղաքից դուրս՝ բնության գրկում.
* մերսումները, քանի որ տեսողության վատացման պատճառներից մեկն էլ կարող է լինել սկոլիոզը.
* կարոտինով (գազար, խուրմա, ծիրանաչիր) եւ C վիտամինով (կիտրոն, հապալաս, հաղարջ եւ այլն) հարուստ սնունդը:

Ճիշտ է, այս ամենի արդյունքը շատ ավելի դանդաղ կերեւա, բայց դրա փոխարեն ավելի կայուն ու երկարաժամկետ կլինի եւ առանց երեխայի առողջությանը որեւէ վնաս պատճառելու: Եվս մեկ կարեւոր հանգամանք: Այս խորհուրդներն ուղղված են օրգանիզմի ընդհանուր կոփմանը, այլ ոչ միայն աչքերին կամ տեսողության լավացմանը:

Ուշադիր եղեք ձեր փոքրիկի նկատմամբ, որպեսզի կարողանաք ժամանակին կանխել տեսողության եւ ոչ միայն դրա հետ կապված բոլոր խնդիրների առաջացումը:



Բարի լույս եւ բարի ախորժակ

Մարդիկ հաճախ լավ չեն գիտակցում առողջ սնվելու նշանակությունը, ինչպես նաեւ առավոտյան անպայման նախաճաշելու անհրաժեշտությունը: Սա հատկապես վերաբերում է այն երեխաներին ու երիտասարդներին, որոնք առավոտյան դասերից ուշանալով, հրաժարվում են նախաճաշել՝ չցանկանալով «ավելորդ» ժամանակ վատնել դրա վրա: Սակայն բոլորն էլ ուզում են լինել առողջ, աշխույժ եւ երկարակյաց: Իսկ ի՞նչ կապ ունի այստեղ նախաճաշը: Պարզվում է, որ շատ ուղղակի: Բայց եկեք խոսենք փաստերով:

Գիտնականների ուսումնասիրությունները ցույց են տվել, որ առավոտյան նորմալ սնվող մարդկանց օրգանիզմում նյութափոխանակությունը միջինից 3-4 տոկոսով ավելի արագ է կատարվում: Իսկ նրանց մեջ, ովքեր պարբերաբար բաց են թողնում նախաճաշը՝ այն 4-5 տոկոսով դանդաղ է ընթացնում: Հաշվարկներ են արվել, որ մեկ տարվա ընթացքում առավոտյան նախաճաշից խուսափողները կարող են իրենց քաշն ավելացնել ոչ այնքան անհրաժեշտ 4-5 կիլոգրամով:

Հետազոտությունները նաեւ ցույց են տալիս, որ մարդիկ, ովքեր առավոտյան հաց են ուտում, հետագայում ավելի առողջ ու պակաս յուղոտ սնունդ են ընտրում: Նրանք ավելի հեշտ են հաղթահարում ուշ երեկոյան կամ գիշերը որեւէ բան «ծամելու» ցանկությունը: Բանն այն է, որ գլխուղեղում տեղի ունեցող քիմիական ռեակցիաներն ավելի հաճախ մարդուն դրդում են յուղոտ սնունդ ուտել երեկոյան ժամերին: Նույն պատճառով առավոտյան արթնացող մարդկանց մեծ մասն ավելի շատ ձգտում է ածխաջրեր օգտագործել: Ստացվում է այնպես, որ վաղ առավոտյան մարդիկ ավելի են հակված առողջ սնունդ ընդունելու:

Առավոտյան ուտելն օգտակար է ոչ միայն նիհարել ցանկացողների համար, այլեւ օգնում է կանխել արյունատար համակարգի հիվանդությունները, որոնք կարող են հանգեցնել ինֆարկտի, կաթվածի կամ հաշմանդամության:

Արյունատար համակարգի հիվանդությունների ամենատարածված պատճառներից են տրոմբները, որոնք խցանում են արյան անոթները: Դրանք առաջանում են սկավառակի տեսք ունեցող տրոմբոցիտներից, որոնք արյան շրջանառության խանգարման դեպքում սկսում են կպչել իրար ու խցանել անոթները: Գիտնականները պարզել են, որ առավոտյան չնախաճաշող մարդկանց արյան մեջ դրան նպաստող գործոնների թիվն ավելի մեծ է: Նրանք նաեւ բացահայտել են, որ ինֆարկտների ու կաթվածների զգալի մասը տեղի է ունենում առավոտյան:

Շատերն են լսել սրտանոթային հիվանդությունների հիմնական պատճառ հանդիսացող խոլեստերինի մասին: Այսպես ուրեմն, առավոտյան նախաճաշն օգնում է զգալիորեն նվազեցնել օրգանիզմում դրա պարունակությունը:

Առավոտյան հաց չուտելով՝ մարդն իրեն դատապարտում է փոքրիկ հացադուլի, որն իր հերթին կարող է հանգեցնել միզապարկի հիվանդության:

Ուրեմն՝ եթե դուք մինչեւ հիմա խուսափում էիք առավոտյան հաց ուտելուց, ապա աշխատեք մոռանալ այդ մասին: Պետք չէ ուշադրություն դարձնել ախորժակի բացակայությանը: Մի քանի շաբաթ պարբերաբար նախաճաշելուց հետո օրգանիզմն ինքն արդեն առավոտյան ձեզանից ուտելիք կպահանջի: Իմիջիայլոց, խոսքը բոլորովին էլ առավոտյան «բերանը մի կտոր հաց դնելու» մասին չէ, այլ լիարժեք ու բազմազան սննդի:

Աշխատեք նախապատվությունը տալ շիլաներին: Ընտրեք ձավարեղենի այնպիսի տեսակներ (օրինակ՝ հնդկաձավար կամ վարսակի փաթիլներ), որոնց մեջ ճարպերի պարունակությունը ցածր է, իսկ բջջանյութը (клетчатка)՝ շատ: Այն ավելի համեղ դարձնելու համար կարող եք շիլայի մեջ կտրատված մրգեր, տարբեր տեսակի չրեր, չամիչ կամ մանրացված ընկույզ ավելացնել:

Զգտեք երեկոյան քիչ ուտել, իսկ գիշերն ընդհանրապես հրաժարվել սննդից: Այդ սովորություններից ազատվելով՝ դուք առավոտյան ավելի լավ ախորժակ կունենաք:

Սկզբում օրգանիզմը կարող է կամակորություն անել եւ ընդդիմանալ այդպիսի փոփոխություններին, սակայն որոշ ժամանակ անց դուք կզգաք, որ ձեր ինքնազգացողությունն աստիճանաբար լավանում է եւ կհպարտանաք, որ ձեռք եք բերել նոր, օգտակար սովորություն: Շատ շուտով ձեր օրգանիզմը երախտահատույց կլինի ձեզ դրա համար:

Էջը պատրաստեց
Գոհար Բաղդասարյանը

ԱՐՏԱԿԱՐԳ ... ժամանց

Էրոտիկ անեկդոտների ազգային առանձնահատկությունները

Անգլիական տարբերակ

Նորապսակների առաջին ամուսնական գիշերն է: Առավոտյան նրանք արթնանում են: Նրանց սուրճ, թխվածքաբլիթներ եւ ամսագրեր են մատուցում: Ամուսինը թերթում է ամսագրերից մեկն ու ասում.

- Թանկագինս, լսեք, թե ինչ են գրում: Քիմիկոսները գտել են հավին աքլոր դարձնելու ձեւը: Հետաքրքիր է, չէ՞:

- Այո, սըր, շատ հետաքրքիր է:

- Թանկագինս, իսկ դուք չէի՞ք ուզենա դառնալ տղամարդ:

- Ոչ, իսկ դու՞ք, - հարցնում է կինը:

Հրեական տարբերակ

Ամուսինները գալիս են րաբբիի մոտ եւ ասում, որ ուզում են ամուսնալուծվել, բայց ոչ մի կերպ չեն կարողանում ունեցվածքը հավասար բաժանել:

- Լավ, - ասում է րաբբին, - տուն ունե՞ք:

- Ունենք:

- Քանի՞ հարկանի է:

- Երկու:

- Լավ, ուրեմն՝ մի հարկը քեզ, մյուսը՝ քեզ: Քանի՞ աքոռ ունեք:

- Չորս:

- Լավ, ուրեմն երկուսը՝ քեզ, երկուսը՝ կնոջդ:

- Քանի՞ երեխա ունեք:

- Երեք:

- Լավ չէ, ուրեմն գնացեք մեկն էլ ունեցեք, հետո կգաք, - ասում է րաբբին:

Ամուսիններն արդեն հասել էին սինագոգի դռան մոտ, երբ հանկարծ տղամարդը շրջվում է եւ հարցնում.

- Իսկ եթե հանկարծ զու՞յգ ունենանք:

- Լավ, լավ, արի: Սրան տեսեք, մասնագետ է դարձել, - ասում է կինն ու քաշում նրա թեւից:

Ռուսական տարբերակ

Անտառի արահետով մի զինվոր է քայլում: Նրան մի երիտասարդ կին է հանդիպում՝ գրկին փոքրիկ երեխա: Արահետը չափազանց նեղ էր եւ հանդիպելով՝ նրանք կանգ են առնում: Կինն ասում է.

- Լսիր, զինվորիկ, ես քեզանից վախենում եմ:

Զինվորը շփոթվում է.

- Ի՞նչ կա վախենալու, չէ՞ որ գրկիդ երեխա կա:

- Ոչինչ, ես նրան մի կողմ կդնեմ, - հայացքն ամոթխած մի կողմ թեքելով ասում է կինը:

Ֆրանսիական տարբերակ

Տանտիրուհին ասում է աղախնուն, որ ուզում է նրան աշխատանքից ազատել:

- Շատ լավ, տիկին, - ասում է աղախինը, - դա ձեր իրավունքն է, բայց դուք շատ կզղջաք, որովհետեւ ես ամեն ինչ շատ ավելի լավ եմ անում, քան դուք:

- Այդ ի՞նչն ես ինձանից լավ անում, - հարցնում է տիրուհին:

- Ես ձեզանից համեղ եմ պատրաստում:

- Ո՞վ է ասում:

- Ձեր ամուսինը, տիկին: Ես նաեւ ձեզանից լավ եմ արդուկ անում:

- Դա՞ ով է ասել:

- Ձեր որդին, տիկին: Անկողնում ես նույնպես ձեզանից լավն եմ:

- Իսկ դա ո՞վ է ասել, - սարսափում է տիրուհին:

- Ձեր վարորդը, տիկի՛ն:

Ֆիննական տարբերակ



Զորամասի հրամանատարը, բարեխիղճ ծառայության համար նորապսակ սերժանտ Վիրոլայնենին եռօրյա արձակուրդ է տալիս: Երիտասարդ սերժանտը հագնում է դահուկները եւ սլանում տուն՝ երկրի մյուս ծայրը:

Նա ժամանակին վերադառնում է զորամաս, եւ հրամանատարը, զինվորներին հրապարակում շարք կանգնեցնելով՝ դաստիարակչական նպատակներով հարցնում է.

- Սերժանտ Վիրոլայնեն, պատմեք մեզ, թե ի՞նչ արեցիք տուն հասնելուն պես:

- Կնոջս հետ անկողին մտա, ընկե՛ր հրամանատար:

- Ճիշտ է, սերժա՛նտ, իսկ ի՞նչ արեցիք հետո:

- Հանեցի դահուկներս...

Հեծյալ ազնվական / Կճղակ	⇨	⇩		⇩		Հեր, վարս	⇨	Առանց բարիք չի լինում / Հերոս՝ ... Ավետիսյան	⇨	Նազարբաեվը ազգությամբ / Մայր՝ բարբառային	⇨
⇩	Խիստ վախ / Կսկիծ, ցավ		Զրարջ / «Գեւորգ Մարզպետունի» վեպի հեղինակը		Պատճառաբանություն / Թթված գինի	⇨		⇩		⇩	
⇨			⇩		⇩	Բաղձալի ցանկություն / Անբարո միջնորդ	⇨				
	Կարմիր գույնի քար / ~~Գոմաղբ~~	⇨				⇩	Կովկասի գերուհին / ... Միրզա	⇨			
⇨				Երկրի՝ ջրով չծածկված մասը	⇨		⇩			Մարզիկների խումբ	
	Եգիպտոսի միապետ / Կարճ, սեղմ (խոսք)	⇨							Փողային երաժշտական գործիք	⇩	Տաքդեղ
Դեմքի մաս	⇩	Ուտելիքի մնացորդ		Անհաս պտուղ / Ռուս կինոդերասան	⇨			Աչքի կենտրոնը / Կերակրատեսակ	⇨ ⇩		⇩
⇨		⇩		⇩	Մարզագորգ / Մրցափուլ	⇨		⇩			
Թեւը կտրած / Թելի, էլեկտրական	⇨				⇩	Ռուսական միապետի տիտղոս	⇨			Սապատավոր տավար	
⇨			Ձեռքի ափ	⇨			Թեք աշտարակ / Կոֆի Անան	⇨		⇩	
Պետական պաշտոնյա / Ապրանքի արժեքը	⇨					«Ստաբատ ...»	⇨ ⇩				
⇨			Ճարտարապետական կառուցվածքային տարր		... Պարոնյան / ... Ռոստովա	⇨					Երկու կից բաժիններով պարկ
Հայ երկրորդ տպագրիչը՝ ... Թոխաթեցի		Եղեւնու պտուղը / ԱՄՆ-ի դրամը	⇨ ⇩		⇩	Վաղ առավոտ	⇨				⇩
⇩	Ուղտ՝ բարբառային / Հալոգեն	⇨ ⇩									
⇨				Հատապտուղ							
	Տիբեթյան քահանա	⇨		⇩							
⇨											
	Գլխի փաթթոց՝ արեւելքում		Ռուս երգիչ՝ Ֆյոդոր ...	⇨							

§²ñï³Ï³ñ·Ã»ñÃ¦ß³µ³Ã³Ã»ñÃÇ
ÑÇÙÝ³¹Çñ »ñ Ññ³ï³ñ³ÏÇã
§²ñï³Ï³ñ· ³ÉÇù¦
éñ³ï í³Ï³Ý Ï»ÝïñáÝ êäÀ

îÝûñ»Ý-ËÙµ³·Çñ
ÜÇÏáÉ³Ù ¶ñÇ·áñÙ³Ý
öáËïÝûñ»Ý-ËÙµ³·Çñ
²ñ³ØáíëÇëÙ³Ý
î»ËÝÇÏ³Ï³Ý ËÙµ³·Çñ
ê³Ùí»É êÇÙáÝÙ³Ý

Ò»ñ³íáñáÕª Üáñ³Ùñ Ø»ÉÇÙÙ³Ý
¾ç³¹ñáÕª ì³ñ¹³Ý ¶³ëå³ñÙ³Ý

ºñ»ñ³Ý, äáõßÏÇÝÇ 25
Ð»é. 567656, 24-24-22
E - mail: tert@emergency.am

Արտակարգ իրավիճակներ

î å³·ñí³Í ¿ §îÇ·ñ³Ý Ø»Í¦ Ññ³ï³ñ³ÏãáõÃÙ³Ý
ïå³ñ³ÝáõÙ` ²ñß³ÏáõÝÙ³ó 2
Ì³í³ÉÁ` 2 ïå³·ñ³Ï³Ý Ù³ÙáõÉ
ä³ïí»ñ`435, ·ñ³ÝóÙ³Ý íÏ³Ù³Ï³Ý` 1074,
ïå³ù³Ý³ÏÁ` 5000 ûñÇÝ³Ï:
êïáñ³·ñí³Í ¿ ïå³·ñáõÃÙ³Ý 13.9.2007 Ã.